



Տ. ԱՎԱԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանը (ավագանի անունով՝ Վագգեմ) ծնվել է Բաղդադում 1942 թ.: Իր սկզբնական կրթությունը ստացել է Բաղդադի հայոց Թարգմանչաց և Սվաճյան ազգային վարժարանում: Այնուհետև նա սովորում է Հիսուսյան քոլեջում և Ալ Հիքմա համալսարանում: 1968 թ. մեկնում է Միացյալ Նահանգներ՝ իր ուսումը կատարելագործելու նպատակով, ուր սովորում է Ս. Փրոքոփիս քոլեջում: 1970 թ. ավարտում է այն հաջողությամբ և ստանում «Պատկավոր արվեստից» տիտղոսը: Այնուհետև Տ. Ավագ եպիսկոպոսն ուսանում է Նյու Օռլեան Թուլեյն համալսարանում, որն ավարտում է փիլիսոփայական գիտությունների մագիստրոսի աստիճանով: 1973 թ. հաճախում է Նյու Յորքի Ս. Վլադիմիր օրթոդոքս համալսարան, ուր 1976 թ. ստանում է աստվածաբանական գիտությունների մագիստրոսի աստիճան՝ «Ս. Գրիգոր Նարեկացին որպես միստիկ» ավարտաճառի համար:

1975 թ., ձեռամբ ԱՄՆ-ի արևելյան թեմի հայոց առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի, Նյու Յորքի հայոց Ս. Վարդան եկեղեցում ձեռնադրվում է սարկավագ: 1976 թ. սեպտեմբերին ժամանում է Ս. Էջմիածին, ուր իբրև ազատ ունկնդիր հետևում է հոգևոր ճեմարանի հայագիտական և եկեղեցագիտական դասընթացներին՝ միևնույն ժամանակ դասավանդելով անգլերեն լեզու:

1977 թ. մայիսի 29-ին, Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթրոյանի ձեռամբ, ստանում է կուսակրոն քահանայի աստիճան:

1980 թվականի հոկտեմբերի 4-ին, Մայր Աթոռում ծայրագույն վարդապետության



գավազան ստանալու համար, Տ. Ավագ վարդապետը ներկայացնում է «Փրկագործության պատմության ընթացքը» ավարտաճառը:

1980 թվականին հայրապետական կոնվակով նշանակվում է Իրաքի հայոց թեմի առաջնորդ:

1982 թվականի փետրվարի 14-ին եպիսկոպոս է ձեռնադրվում նույն թեմի վրա:

*
* *
* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորապսակ Տ. Եղիշեն, Տ. Ոսկան, Տ. Աղան, Տ. Նորվան և Տ. Ավագ սրբազան եպիսկոպոսներին, որոնք գտնվում են իրենց հոգևոր ու մտավոր խոստումնալից ուժերի հասունության

և ծաղկման շրջանում, ուժեր, որոնք, փստահ ենք, ի սպաս կորվեն մեր հավատացյալ ժողովրդի եկեղեցական, ազգային-հայրենասիրական ծառայության նվիրական գործին՝ հուրախություն Հայոց Հայրապետի արտի, ի պատճառություն Հայաստանյայց Առաքելական Ա. Եկեղեցու և ի մխիթարություն մեր հավատացյալ ժողովրդի:

